ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 199/Դ-22

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» դեկտեմբեր 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Մեջլումյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Լիազոր մարմին) մի կողմից, և «Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Վ. Բեջանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1854-Ն որոշման 2-րդ կետը և 4-րդ կետի 2)-րդ ենթակետը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Լիազոր մարմինը պարտավորվում է Կազմակերպության կաթսայատան կաթսաների փոխարինման համար Կազմակերպությանը հատկացնել 15 400 000 (տասնհինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումար՝ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի «1183. Ապահով դպրոց» ծրագրի «32012. Հանրակրթական դպրոցների գույքով և տեխնիկայով ապահովում» միջոցառման (բաժին՝ 09, խումբ՝ 06, դաս՝ 01-89) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Լիազոր մարմինը իրավունք ունի.

2.1.1. Վերահսկել Կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2. Կազմակերպությունը իրավունք ունի.

2.2.1. Սահմանված կարգով Լիազոր մարմնից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

2.3. Լիազոր մարմինը պարտավոր է.

2.3.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Կազմակերպությանը փոխանցել 3.2. կետում նշված ժամկետում:

2.3.2. Կազմակերպությանը ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1. Իրականացնել Լիազոր մարմնի կողմից հատկացված գումարի՝ ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.2. Հատկացվող ֆինանսական միջոցները օգտագործել սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակով:

2.4.3. Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման և կատարողական ակտերի պատճենները ներկայացնել Լիազոր մարմնին:

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Լիազոր մարմինը սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Կազմակերպությանը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3.2. Վճարման ժամկետը սահմանվում է սույն պայմանագրի ստորագրման պահից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լիազոր մարմին	**Կազմակերպություն**
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի 1 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011038537 ՀՎՀՀ 02593108	«Երևանի Հենրիկ Խաչատրյանի անվան հ.199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ ք. Երևան, Դավթաշենի 4-րդ թաղ. ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018004300 ՀՎՀՀ 01211244
Աշխատակազմի քարտուղարի ժ/պ	**Տնօրեն**
..... Ս. Մեջլումյան (ստորագրություն) կ.տ	..... Վ. Բեջանյան (ստորագրություն) կ.տ